

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՀԱՐՈՒՏԻ ՈՐԴԻՈՅՆ ՊԱՆԴԻՏՈՒԹԻՒՆԸ

- 64) Չի՞ն լեռներն, երկինքն, ալիքներն մասերն
 Հոգւոյս՝ ինչպէս ես ինքքս անոնց եմ.
 Սըրտիս մէջ միթէ խոր չէ՞ անոնց սէրն,
 տենչով մաքուր պիտ՝ չդատապարտե՞մ
 ողջ առարկային երբ զանոնք բաղդատեմ,
 Յափն խորութեան որ եմ ըզգացած
 Դիմաց զըզուանքիս ըստոր աղտերուն
 Անոնց որ նայուածքնին միշտ գետին յառած,
 Եւ անհամարձակ մըտածմունքնին երբեք չէ փայլած:
- 65) Բայց այդ չէ նիւթըս, ուրեմն դարձնեմ էջն
 Անմիջականին որ պահանջն է սուր՝
 Խոհին կը գտնենք որ սափորին մէջ.
 Հոն՝ փոշին մէկուն որ էր լըման հուր -
 Բնիկ երկրին որուն կը շընչեմ այժմ մաքուր
 Օղը, կարճատեւ ես պանդովստ անցուր,
 Ուր եղաւ ան մի անձնատրութիւն,
 Փառքի բարձունքով - յիմար հարց մը որ,
 Շահն ու պահելը արժեց իր լման անդորր:
- 66) ինքնատանջ, վայրի, սոփեստ Ռուսոն հոս
 Յափ առաքեալն որ կիրքն դիպական
 ըրաւ գերագանց ու վիշտն պերճախօս
 որ ողորմելի, թըշուառ ըրաւ զայն,
 խենթութիւնն իսկ բայց գեղեցկացուց ան,
 Դալար, պիրկ մտածմանց տալով երկնային գոյն
 Բառերով շողուն հոսեցուց զանոնք,
 Զերթ ճառագայթներ երկնային արփոյն,
 Որ կը տեղան վրայ վըշտայոյզ արցունքներուն:
- 67) Նըման էր սէրն իր կըրքի մ'էոյթին,
 ծառի մ'պէս այրող բոցով եթէրին
 Բորբոքուն էր ան նման իր բընոյթին
 Չէր նըմաներ ան մի սիրահարի,
 Տիկինի մ'ամբողջ սիրով կենսալի.
 Ոչ երազի մ'մէջ մեռեալի մ'յարեալ,
 Այլ գեղեցկութեան մ'որ վերածուեցաւ՝
 Իր մէջ էութեան մը գերագանցեալ
 Նման այրող էջին որ իր բնութիւն խանգարած ըլլար:

(շարունակելի)

LORD BYRON
 Թրգմն. Մուրատ Մանուկեան